

19. Second Sunday of Transfiguration

Isaiah 3:16-4:1; 1 Corinthians 1:22-2:5; Matthew 18:10-14

19. Բ. ԿԻՐԱԿԻ ԱՅԼԱԿԵՐՊՄԱՆ

Եսայի 3:16-4:1; 1 Կորնթացիներուն 1:22-2:5; Մատթեոսի 18:10-14

Եսայի 3:16-4:1

Այսպէս կըսէ Տէրը. «Քանի որ Սիոնի աղջիկները հպարտացան, բարձրավիզ կը քալեն, ցանկալից ակնարկներ կը նետեն, մանրաքայլ կը շարժին եւ ցատկոտելով կը քալեն, որպէս պատիժ՝ պիտի նուաստացնեմ Սիոնի իշխանուհիները եւ զիրենք պիտի մերկացնեմ իրենց զարդերէն»:

Այն օրը տէրը պիտի հանէ անոնց փառաւոր զգեստները եւ ոտքերուն մեհեւանդները, մագի հիւսքերը, գլխազարդ ծամակալներն ու պսակակալները եւ վզի մահիկները, ճակատի գինդերը, օղերը, ապարանջաններն ու շղարշէ շալերը, ապարօշները, քօղէքներն ու մետաքսէ գօտիները, անուշահոտերու տուփերը, յուռութքները, մատանիներն ու քթամանեակները, դիպակէ պատմուճանները, վերարկուները, թիկնոցները եւ ձեռնապայուսակները, հայելիները, բեհեզէ զգեստները, խոյրերն ու քօղերը: Իրենց հպարտանքին փոխարէն՝ անուշահոտութեան տեղ զարշահոտութիւն պիտի ունենան, մէջքի կամարներուն տեղ՝ չուանէ գօտի, գեղեցկահիւս մագերու տեղ՝ կնտութիւն, ոսկեհիւս դիպակներու տեղ քուրձ պիտի հագնին եւ գեղեցկութեան տեղ ամօթ պիտի ունենան:

Անոնց սիրելի եւ գեղեցիկ զաւակները սուրով պիտի իյնան, իրենց կտրիճները պատերազմի մէջ պիտի սպաննուին: Զարդերու արկղները անարգութեան ու սուգի տապան պիտի ըլլան եւ անոնք պիտի մնան լքուած, առանձին, եւ իրենց քիթերը գետին պիտի քսուին:

Այն օրը եօթը կին մէկ այր մարդ պիտի բռնեն եւ ըսեն. «Մենք մեր հացը կը գտնենք եւ հագուստները կը հոգանք. միայն քու անունդ տուր մեզի, անամուսնութեան նախատինքը վերցուր մեր վրայէն»:

1 Կորնթացիներուն 1:22-2:5

Եւ թէպէտ Հրեաներ հրաշք կ'ուզեն, իսկ Յոյներ իմաստութիւն կը փնտռեն, մենք խաչուած Քրիստոսը կը քարոզենք, որ գայթակղութիւն է Հրեաներուն համար եւ յիմարութիւն՝ հեթանոսներուն համար, թէպէտ նոյն այդ Հրեաներէն ու Յոյներէն կանչուածներուն եւ դարձի եկածներուն համար՝ անիկա Քրիստոսն է, Աստուծոյ զօրութիւնը եւ Աստուծոյ իմաստութիւնը: Արդարեւ, Աստուծոյ տնօրինութիւնը, որ Յոյներ յիմարութիւն կ'որակեն, իմաստնագոյն է քան մարդկային ոեւէ իմաստութիւն. եւ Աստուծոյ խաչը, որ Հրեաներ տկարութիւն կը համարեն, աւելի զօրեղ է քան մարդկային ամէն զօրութիւն:

Եղբայրնէ՛ր, դուք ձեզմէ դատեցէք. ի՛նչ էիք երբ Աստուած ձեզ կանչեց: Ձեզմէ քանի՞ն իմաստուն, հզօր կամ ազնուատոհմ էին մարդկային չափանիշներով: Բայց Աստուած ընտրեց այն՝ ինչ որ այս աշխարհը յիմար կը սեպէ, անով իմաստունները ամօթով ձգելու համար. ընտրեց այն՝ ինչ որ այս աշխարհը տկար կը համարէ, անով հզօրները ամչցնելու համար. եւ

ընտրեց այն՝ ինչ որ այս աշխարհը անարժէք, արհամարհելի եւ ոչնչութիւն կը նկատէ, անով ոչնչացնելու համար այս աշխարհի մեծութիւնները: Եւ ասիկա՝ որպէսզի ոեւէ մարդ չպարծենայ Աստուծոյ առջեւ, որովհետեւ Աստուած ի՛նքն էր որ ձեզ բերաւ Քրիստոսի միացուց, եւ մենք Քրիստոսով ճանչցանք Աստուծոյ իմաստութիւնը եւ գտանք մեր արդարութիւնը, սրբութիւնը եւ փրկութիւնը, որպէսզի, ինչպէս մարգարէութեան մէջ գրուած է. «Ով որ կը պարծենայ՝ թող Տիրոջմով պարծենայ»:

Ես ալ, եղբայրներ՝, երբ ձեզի եկայ՝ իմաստասիրական մեծ-մեծ խօսքերով չէր որ ձեզի պատմեցի Աստուծոյ փրկութեան ծրագիրին մասին, որովհետեւ միակ նպատակ դրած էի՝ ձեզի ճանչցնել Յիսուսը՝ Քրիստոսը, այսինքն նոյնինքն խաչուած Փրկիչը: Եւ ձեր քով եկած աստե՛ս ալ տկար էի, սաստիկ վախ ու դողի մէջ, եւ իմաստութեան ճարտար խօսքերով չէր որ խօսեցայ կամ քարոզեցի, այլ՝ Սուրբ Հոգիին զօրութեամբ եւ ներգործութեամբ, որպէսզի ձեր հաւատքը հիմնուի Աստուծոյ զօրութեան վրայ, եւ ո՛չ թէ մարդկային իմաստութեան:

Մատթէոսի 18:10-14

Զգո՛յ՛, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն մէկը. գիտցէք, որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս: Որովհետեւ Մարդու Որդին եկաւ կորսուածը փրկելու համար:

Ի՞նչ կը կարծէք. եթէ մարդ մը իր հարիւր ոչխարներէն մէկը կորսնցնէ, չի՞ ձգեր ինըսունինը ոչխարները լեռան վրայ եւ չ'ե՞րթար փնտռելու կորսուած ոչխարը: Եւ եթէ պատահի որ գտնէ, վստահ եղէք որ աւելի՛ կ'ուրախանայ այդ ոչխարին համար, քան թէ ինըսունինը ոչխարներուն համար, որոնք կորսուած չեն: Նմանապէս ալ Հայրս, որ երկինքի մէջ է, չ'ուզեր որ այս փոքրիկներէն մէկը կորսուի: